30 օգոստոսի 2018 թվականի N 969 - Ա

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1225-Ն որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՐՄՕՅԼ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1513-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետում «2018 թվականի օգոստոսի 5-ը» բառերը փոխարինել «2018 թվականի դեկտեմբերի 24-ը» բառերով.

2) հավելվածը 88-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 89-95-րդ կետերով՝

«

89.	7326	Այլ արտադրատեսակներ՝ սև մետաղներից. - կոած կամ դրոշմած, բայց առանց հետագա մշակման	տոննա	5	Իրան/Իրան	49,938,000.00
90.	9406	Թիթեղյա ծածկով մետաղական կառույց	տոննա	98	Իրան/Իրան	36,701,000.00
91.	7309	Ամբարներ, ցիստեռններ, բաքեր և նույնանման տարողություններ՝ սև մետաղներից, ամեն տեսակի նյութերի համար (բացի սեղմված կամ հեղուկացված գազից) 300 լ–ից ավելի տարողությամբ, երեսապատումով կամ ջերմամեկուսացումով կամ առանց դրանց, բայց առանց մեխանիկական կամ ջերմատեխնիկական սարքավորումների	տոննա	53	Իրան/Իրան	58,671,000.00
92.	7216	Անկյունակներ, ձևավոր և հատակ պրոֆիլներ՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից	տոննա	88	Իրան/Իրան	29,744,000.00
93.	6902	Հրակայուն աղյուսներ, բլոկներ, սալիկներ և նույնանման հրակայուն կերամիկական շինարարական նյութեր, բացի սիլիկահողային քարային փոշուց կամ սիլիկահողային նույնանման հանքային ապարներից պատրաստված արտադրատեսակներից	տոննա	2	Իրան/Իրան	374,000.00
94.	7019	Հանքաբամբակ (ստեկլովատա)	տոննա	2	Իրան/Իրան	920,000.00
95.	7306	Այլ խողովակներ, փողակներ և սնամեջ տրամատներ (օրինակ՝ բաց կարով կամ զոդովի, գամած կամ նույնանման եղանակով միացրած)՝ սև մետաղների – խողովակներ՝ նավթամուղների և գազամուղների համար	տոննա	7.7	Իրան/Իրան	2,976,000.00

».

3) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «1,269,710,395» թիվը փոխարինել «1,449,034,395» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ